Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի» վերաբերյալ

Վարկային համաձայնագրի անվանումը՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր»

Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ 08.08.2024թ.
Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 19.02.2025թ.
Համաձայնագրով նախատեսված գումարը՝ 40 մլն ԱՄՆ դոլար
Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝ բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
Համաձայնագրի փակման ամսաթիվը՝ 30.06.2029թ.
Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝
15.07.2039թ. - 15.01.2049թ.

Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝ Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր

Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝ Հայաստանի էներգետիկ անցումը ապահովող ծրագիր
Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ 03.02.2025թ.
Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 03.02.2025թ.
Ենթավարկային համաձայնագրով նախատեսված գումարը՝ 40 մլն ԱՄՆ դոլար
Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝ բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝ 30.06.2029թ.
Ենթավարկային համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝
15.07.2039թ. - 15.01.2049թ.

Ծրագրի նպատակը՝ ապահովել ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրումը էլեկտրահաղորդման ցանցում և բարելավել էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակությունը:

Ակնկալվող արդյունքները՝ Ծրագրի իրականացման արդյունքային ոլորտներն են՝
- Ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների իրականացում
- Գործառնական բարելավումներ
- Մեծածախ էներգետիկ շուկայի հետագա ազատականացում
- Սակագնային նոր մեթոդաբանության ներդրում

- Ընկերության կողմից միջազգային վարկային վարկանիշի ստացում
- Կորպորատիվ կառավարման համակարգերի բարելավում և արդիականացում

Ծրագրի խորհրդատուի անվանումը՝ Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի ցուցանիշների հավաստիացման խորհրդատու՝ «Փարվանյան Քոնսալթինգ» ՍՊԸ (Հայաստան)

Պայմանագրի անվանումը՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կարիքների համար «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի ցուցանիշների հավաստիացման խորհրդատուի» ծառայությունների մատուցման պայմանագիր № «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/02»

Պայմանագրի գումարը՝ 144,999,000.0 ՀՀ դրամ

Պայմանագրի ստորագրման ամսաթիվ՝ 04.04.2025թ.

Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 04.04.2025թ.

Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբն ու ավարտը՝
04.04.2025թ.-30. 06. 2029թ.

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 30.06.2025թ. դրությամբ՝

«Փարվանյան Քոնսալթինգ» ՍՊ ընկերության կողմից մատուցված ծառայություններ.

- *Վարկային միջոցների հաշվին - 56,209.88 ԱՄՆ դոլար*

  Ընդամենը - 56,209.88 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝
2025թ. հունիսի 27-ին հայտարարվել է «Տեխնիկական աջակցության և վերահսկման խորհրդատուի» ծառայությունների ձեռքբերման «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-24/02» ծածկագրով նախաորակավորման ընթացակարգ. ներկայացված հայտերի բացման ամսաթիվ է սահմանվել 2025թ. հուլիսի 11-ը:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից: